ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ Մուշեղ Աբգարյանի շնորհավորական ուղերձը Վերջին զանգի կապակցությամբ

Սիրելի՛ շրջանավարտներ, շնորհավորում եմ ձեզ Վերջին զանգի կապակցությամբ:

Ավարտվեց ևս մեկ ուսումնական տարի: Ավանդույթի համաձայն՝ Վերջին զանգի եւ Վերջին դասի այս օրը բոլորիս համար չափազանց հիշարժան է ու անմոռանալի: Հարազատ կրթօջախներում այսօր հնչում է Վերջին զանգը, որի ղողանջներն ուղեկցելու են ձեզ ողջ կյանքում:

Այսօրվանից սկսում է ձեր մուտքը դեպի նոր կյանք: Ետևում թողնելով պատանեկան անհոգությամբ եւ ուրախությամբ լի հիշողությունները՝ այսօրվանից դուք մուտք եք գործում դեպի մեծ կյանք: Ձեր առջեւ նոր հորիզոններ են, որոնք դպրոցական տարիներին ստացած գիտելիքները, ձեր ունակություններն ու կարողությունները լավագույնս դրսևորելու, կյանքում հաստատակամ քայլելու նոր հնարավորություններ են բացում:

Սիրելի՛ ուսուցիչներ, դուք այսօր եւս մեկ սերունդ եք ճանապարհում: Շնորհակալություն մեր զավակների կրթության գործին ձեր անմնացորդ նվիրումի համար:

Սիրելի՛ շրջանավարտներ, վերստին շնորհավորում եմ բոլորիդ դպրոցական ուսումնառությունն ավարտելու կապակցությամբ: Ապագան ձերն է՝ լի ուրախություններով ու հաջողություններով:

Բարի երթ եւ կանաչ ճանապարհ բոլոր շրջանավարտներին: